Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10 - 1

10 հունիսի 2020 թվականի

2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի մարտի 16-ից կրթական գործընթացն առցանց կազմակերպելու արդյունքների և խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի մարտի 16-ից կրթական գործընթացն առցանց կազմակերպելու արդյունքները և խնդիրները»** հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում մարտի 16-ից հետո ռեկտորատը, ուսումնական գործընթացի կազմակերպման բաժինը, դեկանատները և ամբիոնները, էլեկտրոնային սարքավորումների սպասարկման և ծրագրային ապահովման բաժինը հետևողական աշխատանք են կատարել արտակարգ դրության սահմանմամբ պայմանավորված ընդհատված կրթական գործընթացը պատշաճ որակով և անհրաժեշտ ծավալով կազմակերպելու ուղղությամբ: Մարտի 16-ից մայիսի 24-ը ընկած ժամանակամիջոցում պլանային 9765 մուտքերից համալսարանի ամբիոնները փաստացի իրականացրել են 8836 առցանց դասընթաց: Իսկ մայիսի 25-30-ը ժամանակամիջոցում, քննաշրջանին զուգահեռ, իրականացրել են ևս 418 առցանց դասընթաց: Ընդհանուր առմամբ՝ 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում մարտի 16-ից հետո կազմակերպվել է 9254 առցանց դասընթաց, ինչը կազմում է տվյալ ժամանակամիջոցի պլանային մուտքերի շուրջ 95%-ը: Սկսած ապրիլի 1-ից դասաձախողումների տեսակարար կշիռը չի գերազանցել 2%-ը: Մարտի 23-ից սկսած դեկանատների ջանքերով ուսումնական գործընթացը կազմակերպվել է ըստ կիսամյակի դասացուցակային գրաֆիկի՝ յուրաքանչյուր շաբաթվան նախորդող կիրակի օրվա դրությամբ հստակեցվելով և հրապարակվելով տվյալ շաբաթվա դասացուցակը: Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, դեկանները և ամբիոնների վարիչները իրականացրել են 200-ից ավելի առցանց դասախոսությունների դասալսումներ, արդյունքների վերաբերյալ կազմակերպել բովանդակային և տեխնիկական քննարկումներ, մշակել և հաստատվել են համալսարանի առցանց կրթության կազմակերպման, գիտելիքի գնահատման, պրակտիկաների և ամփոփիչ ատեստավորման 4 ժամանակավոր կարգեր: Առցանց կրթության գործընթացը պատշաճ կազմակերպելու համար ձևավորվել է համալսարանի դասախոսներին ներառող առցանց հարթակ, որը ծառայեցվել է համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումները հասցեական ներկայացնելու և պրոֆեսորա-դասախոսական կազմին տեխնիկական ու բովանդակային աջակցություն տրամադրելու համար: Ռեկտորատի և դեկանատների ջանքերով մշակվել և համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին են տրամադրվել 25 մեթոդական երաշխավորություններ (տպագիր և վիդեոնյութերի տեսքով): Էլեկտրոնային սարքավորումների սպասարկման և

ծրագրային ապահովման բաժնի, ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի և դեկանատների համագործակցությամբ գործարկվել են համալսարանի moodle.asue.am և ums.asue.am հարթակները:

Moodle.asue.am հարթակում ձևավորվել են համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի 6 մասնագիտությունների 1-3-րդ կուրսերի մասնագիտական կրթական ծրագրերի 2019-2020 ուստարվա գարնանային կիսամյակի դասացուցակներում ներառված 347 դասընթացների, առկա ուսուցման մագիստրատուրայի 14 մասնագիտությունների 1-ին կուրսերի 97 դասընթացների և հեռակա ուսուցման մագիստրատուրայի 9 մասնագիտությունների 1-4-րդ կուրսերի 206 դասընթացների մոդուլները: Բոլոր դասընթացների յուրացման համար անհրաժեշտ ուսումնառության նյութերը պրոֆեսորադասախոսական կազմի կողմից վերբեռնվել են ձևավորված դասընթացների մոդուլներում:

Moodle.asue.am հարթակի գործարկման, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների գործողությունների վիճակագրության վարման, գիտելիքի ստուգման ենթամոդուլն աշխատացնելու և ընտրովի դասընթացների ընտրությունը կազմակերպելու նպատակով համակարգում նույնականացվել են 312 դասախոսներ, առկա ուսուցման համակարգի 3457 ուսանողներ և հեռակա ուսուցման համակարգի 1768 ուսանողներ: Համակարգի շահառուները մարտի 16-ից հունիսի 7-ը ընկած ժամանակահատվածում համակարգից օգտվել են 956.129 անգամ, որից ուսանողները՝ 860.792 անգամ:

Moodle.asue.am հարթակում կազմակերպվել է համալսարանի բոլոր մասնագիտությունների, բոլոր կրթաձևերի կրթական ծրագրերի 2020-2021 ուստարվա համար նախատեսված ընտրովի դասընթացների ընտրության գործընթացը:

Ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները մեծ ուշադրություն են դարձրել ոչ միայն կիսամյակի ընթացքում ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման, այլև ուսանողների ակտիվության հաշվառման և գիտելիքի ստուգման գործընթացի կազմակերպման ու անցկացման հարցերին:

Ums.asue.am հարթակում ձևավորվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի բոլոր կրթական ծրագրերը և ուսումնական խմբերը, դրանց էլեկտրոնային մատյանները և վարվել է ուսանողների ակտիվության ամբողջական առցանց հաշվառում: Համակարգ են վերբեռնվել բոլոր ակադեմիական խմբերի առցանց քննությունների անցկացման հարցատոմսերը, moodle.asue.am հարթակ են վերբեռնվել թեստային եղանակով գիտելիքի ստուգում նախատեսող դասընթացների թեստային ամբողջովին նոր մշակված բազաներ, ձևավորվել են առցանց գիտելիքի ստուգման ամփոփաթերթերը: Ներկայում համալսարանում ընթանում է ուսանողների գիտելիքի ամբողջական առցանց ստուգման գարնանային քննաշրջանը:

Ums.asue.am հարթակում ձևավորվել են ավարտական կուրսերի ուսանողների ամփոփիչ ատեստավորման գրանցամատյանները, համակարգ են վերբեռնվել առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի բոլոր ուսանողների ավարտական աշխատանքները (մագիստրոսական թեզերը) և դրանց գրախոսությունները: Ուսանողների փորձառությունների հաշվետվությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների փաստաթղթավորման նպատակով համալսարանի ամբիոնների համար ձևավորվել են ամբիոնային էլեկտրոնային

հասցեներ, որոնց միջոցով էլ կազմակերպվել է հաշվետվությունների ավարտական աշխատանքների և թեզերի փաստաթղթաշրջանառության շարժը՝ ըստ համալսարանի գիտական խորհրդի ընդունած ժամանակավոր կարգի պահանջների:

Ապրիլի 22-29-ը ընկած ժամանակահատվածում կազմակերպվել է առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ուսումնաարտադրական փորձառության հաշվետվությունների և առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի գիտահետազոտական փորձառության հաշվետվությունների պաշտպանությունները: 2019-2020 ուսումնական տարում փորձառություն են անցել 1410 ուսանողներ: Նրանցից 774-ը առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողներ են, 1-ը՝ երկտարեցի ուսանող (բակալավրիական 6 մասնագիտությունների կրթական ծրագրերի), 360-ը՝ հեռակա ուսուցման բակալավրիատի 5-րդ կուրսի ուսանողներ (բակալավրիական 13 մասնագիտությունների կրթական ծրագրերի), 275-ը՝ առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ (մագիստրոսական 18 մասնագիտությունների կրթական ծրագրերի): Փորձառություն անցած ուսանողներից ընդամենը 4-ը չեն հանձնել փորձառության հաշվետվություն կամ չեն ներկայացել պաշտպանությանը:

Մայիսի 5-ից հունիսի 10-ը ընկած ժամանակահատվածում կազմակերպվել է ամփոփիչ ատեստավորման 128 նիստ: Առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի 774 ուսանողից ավարտական աշխատանք ներկայացրել և առցանց ամփոփիչ ատեստավորմանն է մասնակցել 774 ուսանող. բոլորը ստացել են դրական գնահատական: Առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի 275 ուսանողից մագիստրոսական թեզ ներկայացրել և առցանց ամփոփիչ ատեստավորմանն է մասնակցել 271 ուսանող. բոլորը ստացել են դրական գնահատական: Համալսարանի նախորդող տարիների ամփոփիչ ատեստավորումը չհաղթահարած ուսանողներից ավարտական աշխատանք (մագիստրոսական թեզ) են կատարել և ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել բակալավրիատի 11 և մագիստրատուրայի 3 երկտարեցի ուսանողներ. բոլորը ստացել են դրական գնահատական:

Կիսամյակի ընթացքում համահամալսարանական հիմնական առարկաների գծով կազմակերպվել և անցկացվել են գիտելիքների համակարգչային, գրավոր թեստային և բանավոր ստուգումներ: Ստուգումները կազմակերպվել են գործող կարգի պահանջներին համապատասխան: Խախտումներ և ձախողումներ չեն արձանագրվել:

Արձանագրելով կատարված աշխատանքները, գիտական խորհուրդը, միաժամանակ, նշում է՝ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1. Դեռևս հայտնի չէ 2020-2021 ուսումնական տարում կրթության կազմակերպման ձևը և առկա է հավանականություն, որ անհրաժեշտ կլինի աշնանային կիսամյակը ևս կազմակերպել առցանց եղանակով:
2. Moodle.asue.am հարթակ վերբեռնված ուսումնառության նյութերը որոշ համաբուհական դասընթացների պարագայում տարբեր են՝ ներառյալ պարտադիր ընթերցանության համար անհրաժեշտ նյութերը: Որոշ դասընթացների հայալեզու ուսումնառության նյութերը բավարար չեն դասընթացի լիարժեք յուրացման համար:

3. Թերություններ կան դասախոսների կողմից ուսանողների հաճախումների հաշվառման, ակտիվության առցանց գնահատման և ամփոփման աշխատանքներում:
4. Որոշ դասընթացների գծով առարկայական հարցաշարերը բարեփոխման և թարմացման կարիք ունեն:
5. Ամբիոնները դեռևս գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի քննարկմանը չեն ներկայացրել ուսումնական ծրագրերի մինչև 10%-ը չգերազանցող փոփոխությունները, որոնց կատարելու անհրաժեշտությունը բարձրաձայնվել էր ուսումնամեթոդական հանձնաժողովի՝ 2020 թվականի փետրվարի նիստում:
6. Քննաշրջանից առաջ թեստային բազաների ստուգումները թերի են կատարվել, ինչի մասին փաստում է թեստային ստուգման բողոքարկումների արդյունքում բարձրացվող գնահատականների մեծ տեսակարար կշիռը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հանձնարարել ռեկտորատին՝

1) արձանագրված թերությունների վերացման համար մշակել որոշակի միջոցառումներ՝ նշելով պատասխանատուներին,
2) ամբողջացնել ուսումնական գործընթացի առցանց կազմակերպման և վարչարարության իրականացման կարգավորումների համակարգը՝ ապահովելով դրանց ներդաշնակությունը բոլոր կրթաձևերի բակալավրիական ու մագիստրոսական կրթական ծրագրերում,
3) ներդնել դասախոսների կողմից՝ իրենց ուսումնական բեռնվածության օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների չկատարման դեպքում աշխատանքի վարձատրության վերահաշվարկի կառուցակարգեր:

2. Հանձնարարել ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնին՝

1) նախապատրաստվել 2020-2021 ուսումնական տարում էլեկտրոնային դեկանատի լիարժեք գործարկմանը, բոլոր կրթաձևերի ուսումնական պլաններում կատարել առաջարկված և հաստատված փոփոխությունները՝ բոլոր ակադեմիական խմբերի էլեկտրոնային մատյանները ժամանակին գործարկելու համար:

3. Հանձնարարել էլեկտրոնային սարքավորումների սպասարկման և ծրագրային ապահովման բաժնին՝

1) նախապատրաստվել 2020-2021 ուսումնական տարում աշնանային կիսամյակին և moodle.asue.am հարթակում ձևավորել աշնանային կիսամյակի բոլոր մասնագիտությունների բոլոր կրթաձևերի դասընթացների մոդուլները:

4. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին՝

1) հուլիսի 1-ից ֆակուլտետից նշանակված պատասխանատուների ներգրավմամբ նախապատրաստվել 2020-2021 ուսումնական տարվան, ձևավորել բոլոր ակադեմիական խմբերը, դասացուցակները՝ սեպտեմբերի 1-ից էլեկտրոնային դասամատյանները բնականոն գործարկելու համար,
2) դասաձախողումների դեպքերը քննարկել ֆակուլտետների խորհուրդների և ամբիոնների նիստերում՝ անհրաժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա,
3) վերհանել առցանց դասախոսություններին պարբերաբար չմասնակցող ուսանողների բացակայության պատճառները, առանց լուրջ տեխնիկական կամ առողջական խնդիրների բացակայող ուսանողների բացակայությունների հարցը քննարկել ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում՝ անհրաժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա:

5. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝

1) վերանայել դասընթացների հարցաշարերն ու moodle.asue.am հարթակում վերբեռնված թեստային բազաները, ավելացնել թեստերի քանակը, դրանցում բացառել երկիմաստ հարցերը: Վերանայված հարցաշարերը տրամադրել լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ համալսարանի կայքում զետեղելու համար, ինչպես նաև վերբեռնել moodle.asue.am հարթակում,
2) նախապատրաստվել 2020-2021 ուսումնական տարում աշնանային կիսամյակին և moodle.asue.am հարթակում ձևավորված դասընթացների մոդուլները վերբեռնել անհրաժեշտ ուսումնառության նյութերով, քննական հարցաշարերով և դասընթացների ծրագրերով,
3) իրականացնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման մշտադիտարկումներ, ինչպես նաև դասալսումներ՝ արդյունքները քննարկելով ամբիոնի նիստերի ընթացքում,
4) moodle.asue.am հարթակում թարմացնել դասախոսությունների հայալեզու նյութերը, ուսումնառության համար պարտադիր և երաշխավորվող գրականության հայալեզու և օտարալեզու աղբյուրների ցանկերը:

6. Սույն որոշումը քննարկել ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում, մշակել միջոցառումներ ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ:

7. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2020 թ. հունիսի 10

Երևան